# ԲՈՒՀԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ՖՈՐՍԱՅԹ-ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

**ԴԱԼԼԱՔՅԱՆ Ա. Հ.**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

**ՇԱՔԱՐՅԱՆ Կ. Ս.**

դասախոս, ՀՊՄՀ

Աշխարհը փոխվում է արագընթաց և անկանխատեսելիորեն, տեղեկատվական հեղեղն ու մշակութային էքսպանսիան, համաշխարհայնացումը, շարունակական պատերազմները, համաճարակները, շարունակական և ամբողջ կյանքում սովորելու անհրաժեշտության ըմբռնումը նոր մարտահրավերներ են նետում հասարակությանը՝մասնավորապես բարձրագույն կրթությանը:

Վերջին երկու տարիներին, երբ համավարակի պայմաններում ՀՊՄՀ-ում գերիշխող է դարձել հեռավար կրթությունը, ուսանողների ուսումնական գործընթացը հիմնականում կազմակերպվում է առցանց տարբերակով, երբեմն էլ գործում է հիբրիդային դասացուցակը, անհրաժեշտություն է ծագում այնպես նախագծել բուհի կրթական միջավայրը իբրև կրթական տարածքի, որտեղ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված հրատապ խնդիրները բավականին արագ լուծում ստանան, ուսանողները կարողանան իրենց ուսումնառության ուղին իրականացնել դասախոս-ուսանող- բուհ համագործակցության հետադարձ կապի շրջանակում և կրթական միջավայրը իր բազմագործոն բաղադրիչներով ապահովի ուսանողների հարմարման գործընթացը:

Ներկա պայմաններում վերը նշված խնդիրների արդիականությունը աճում է այն առումով, որ մեր հասարակությունը գտնվում է ճգնաժամային փուլում, ուստի անհրաժեշտ է անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման համար, բոլոր սոցիալական ինստիտուտների դիտակետում լինի անձի զարգացման, բարեհաջող ինքնիրացման և ինքնակատարելագործման հիմնախնդիրը:

Շարունակական ուսումնառության ուղու մոդելը ցույց է տալիս, որ անհատը հասարակության մեջ ընդգրկվելու համար պետք է մշտապես անցնի ընդգրկվել կրթության մեջ-սովորել-աշխատանք գտնել և աշխատել ցիկլով:

Ժամանակակից տեխնոլոգիաները հիմնովին փոխել են աշխատանքի բնույթը: Բեկումնային տեխնոլոգիաները և ավտոմատացումը նոր հմտությունների ձևավորման պահանջարկ են առաջացնում և նոր պահանջներ սահմանում կրթական հաստատությունների

համար: [1, 31]

Ուստի մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացը եղել է և մնում է մանկավարժական կրթության առանցքային հարցերից: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսուցման գործընթացում արդյունավետ է, երբ այն վերափոխվում է մանկավարժական տեխնոլոգիայի և նպաստում է մանկավարժական հնարավորությունների և դիդակտիկական պայմանների բացահայտմանը:

Կրթական միջավայրը դա այն սոցիալ մշակութային միջավայրն է, որը ի շնորհիվ իր կառուցվածքային բաղադրիչների, ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակիորեն ներազդում է անհատի ձևավորման վրա :[2, 12]

Այսօր մասնագիտական կրթության մեջ, կարևոր խնդիր է համարվում ուսանողների շրջանում փափուկ հմտությունների (soft skills) ձևավորումը, որը անհրաժեշտ է նրանց ամենօրյա կյանքում: Դրանք են. հուզական ինտելեկտը, հաղորդակցական և հռետորական հմտությունները, թիմում աշխատելու կարողությունը, կառուցողական միջանձնային հարաբերությունների ստեղծումն ու պահպանումը, ինքնավստահությունը, կոնֆլիկտների կառավարումը և սթրեսակայունությունը: Բուհի զարգացնող կրթական միջավայրը նախագծելով հասկանում ենք ոչ միայն ուսանողների կողմից անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերումը և մասնագիտական գործունեության զարգացումը, այլև կրթության գործընթացում նրանց ինքնակատարելագործման և ինքնիրացման ձգտումը, որի համար սոցիալ-հոգեբանական ասպեկտը հանդիսանում է հիմնական պայման: Այսինքն, ուսանողի ինքնիրացման շարժընթացի համար կարևոր է կրթական միջավայրում անհրաժեշտ հոգեբանամանկավարժական աջակցության ապահովումը:Բուհի կրթական միջավայրում ուսանողի ինքնիրացման համար հոգեբանամանկավարժական աջակցության իրականացումն առաջին հերթին տեղի է ունենում՝ առարկայական-նյութական, դիդակտիկ, կազմակերպական, հետազոտական, սոցիալ-հաղորդակցական, տեղեկատվական գործունեության ապահովման միջոցով:

Կրթական միջավայրի նախագծումը գործունեություն է, որն ուղղված է ցանկալի ապագայի կերպարի ստեղծմանը և դրան հասնելու ուղիների և միջոցների մշակմանը: Այդ բոլորը միասին ուղղորդված են առարկայական-զարգացնող կրթական միջավայրի ձևավորմանը, որտեղ հնարավոր կլինի ապահովել կրթական գործընթացի արդյունավետությունը: [2, 14]

Այս տեսանկյունից կրթական միջավայրի և տարածության նախագծման համար ֆորսայթ-մեթոդը իր գործիքակազմով, իրականացման մեխանիզմով նպատակահարմար է միջավայրի համալիր կանխատեսում իրականացնելու, որի արդյունքը համարվում է

նորարարական կանխատեսումը, հաղորդակցումը, նախագծերի գեներացումը և առարկայական խնդիրների լուծումը:

Ֆորսայթ (անգլերենից-foresight-հայացք դեպի ապագան, կանխատեսում) հաղորդակցման ձևաչափ է, որը հնարավորություն է տալիս սահմանել ցանկալի ապագան և պայմանավորվել ու պլանավորել համատեղ գործողություններ այդ համատեքստում:[3, 37] ֆորսայթ-մեթոդի հիմքում այն սկզբունքն է, որ ապագան կախված է այսօրվա ներդրված ջանքերից, այն բազմատարբերակ է(вариативно) և չի հանդիսանում անցյալի պրոյեկցիան, իսկ ապագան կառուցվում է այնպես ինչպես այն մեզ ներկայանում է հիմա: ֆորսայթ-մեթոդները բազում են, դրանց ընտրությունը անհատական է `պայմանավորված հիմնախնդրի հետազոտման նպատակով և պայմաններով, ժամանակով, ռեսուրսներով, փորձագետների անհրաժեշտ քանակով ու որակավորմամբ, տեղեկատվության ապահովմամբ և հասանելիությամբ: Ուսումնառության մեջ ֆորսայթի հիմնարար մեթոդներից կիրառվում են ֆորմալ-տրամաբանական(անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, անալոգիա, համեմատում, հիպոթեզ, ապացույց, ընդհանրացում) և հատուկ(փորձագիտական խմբի, սցենարների, քարտավորման, SWOT վերլուծության, STEEPV, մտագրոհ, Դելֆի, համակարգային վերլուծություն, իմիտացիոն մոդելավորման, էքստրապոլյացիայի, քննադատական, ճգնաժամային, փոխադարձ ազդեցության, Expert Panels, ) մեթոդներ և այլն [4, 22]: Այս բոլոր մեթոդները դասակարգվում են հիմնականում հետևյալ համախմբերում՝ կանխատեսման, վերլուծության, մշակման և նոր ստեղծագործականության: Անշուշտ որոշ մեթոդներ միևնույն ժամանակ կարող են հանդես գալ և վերլուծության և գաղափարների ստեղծման համար:

Կրթության մեջ կանխատեսումն ենթադրում է. հաստատության ռազմավարական ծրագրի տեսլականում նախանշվեն այն ուղենիշները, համաձայն որի պետք է տրվեն մասնագիտությունների որակավորումները, մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքները սահմանվեն ելնելով աշխատաշուկայի փոփոխվող և առաջադրվող պահանջներից և ի վերջո կանխատեսել, գնահատել ռիսկերը կրթական գործընթացում, որոնք միտված են լինելու ուսումնառության միջավայրի վերլուծությանը, բարելավմանը և ապագային միտված բուհի զարգացման հեռանկարների նախագծմանը: Այսինքն կանխատեսելով ապագա ուսուցչի մոդելը, որը կհամապատասխանի ապագայի դպրոցի ներկայացվող պահանջներին մենք պետք է կարողանանք ձևավորել առաջանցիկ մասնագետի, որն այսօր սովորում է ապագայի դպրոցի աշակերտին ձևավորելու, դաստիարակելու համար՝ հետևապես ապագայի համար: Իսկ այն գիտելիքները, որոնք այսօր ուսումնասիրում են ուսանողները, վերաբերվում է անցյալի կուտակած հարուստ փորձին,

սակայն դասընթացներ, որոնք պարունակում են իրենց տիրույթում ֆուտորոլոգիական հետազոտություններ, կանխատեսման հնարավոր սցենարաներ, գրեթե բացակայում են, ինչը դժվարացնում է ուսուցչի գործունեության մոդելի ձևավորման գործընթացը՝ ապագայի կոմպետենցիաների կանխատեսման և ապագայի հանդեպ դիրքորոշման ամրակայման տեսանկյունից:

Վերլուծելով ՀՊՄՀ-ի բուհական միջավայրը իր բարդ կառուցվածքային բաղադրիչներով, կարող ենք գնահատել և ընդհանրացնել, որ վերջին տարիներին այն միտված է ապահովելու ուսանողների արդյունավետ ինքնիրացումը ոչ միայն ուսուցման գործընթացում պայմանավորված՝ արժեքային-մտավոր, դրդապատճառային-պահանջմունքային, հուզակամային և անդրադարձային-գնահատողական բնութագրիչների ամբողջությամբ, այլև բուհի սոցիոմշակութային միջավայրի առկայությամբ ուսանողները մասնակցային ակտիվություն են դրսևորում բուհական տարաբնույթ նախագծերին, դրսևորվում բուհական կյանքում, իսկ ֆորսայթ-մեթոդների կիրառմամբ կարելի է նախագծել ապագա բուհի և ապագա շրջանավարտի մոդելները ունեցած ձեռքբերումների և զարգացման հեռանկարների հիման վրա:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Հայաստանի Ազգային Մրցունակության Զեկույց, Երևան, 2019, էջ134:

2. Чернова О.В., Шендрик И.В., Проектирование образовательной среды .-Учебное пособие, Е., 2008, с.92.

3. Позняк А. В. Егорова Ю. Н., Баранова А.В., Использование форсайт-технологии в процессе профильного обучения педагогической направленности.-Б., № 6/2018.

4. Калюжновой Н.Я., «Форсайт как инновационный инструмент формирования перспективной конкурентоспособности страны и региона в условиях глобализации. Материалы Первой Всероссийской Интернет-конференции. Иркутск, Изд-во ИГУ, 2007. – С.7-22.


## FORESIGHT AS A METHOD FOR DESIGNING THE EDUCATIONAL ENVIRONMENT OF A UNIVERSITY


*The article presents a feature of the process designing the educational environment of a university, an innovative and effective method which is the Foresight- method.This method allows you to identify trends and conditioning factors and prepare the future of educational process of the university based on possible scenarios.*

***Keywords:*** *University, educational environment, foresight method, student, participation, structure, soft skills, future teacher*